

սպասեր. երբ տեսաւ թէ նոքա ութ-տասը թիկնապահով մեծ գիւղն անցան, ինք իւր գրաստներով եւ մարդիկներով հեռուէն իրենց հետեւեցաւ, եւ լեռներու կիրճերը իր տղոցմէն քանի մը հոգի թողուց, որ Վահրամեանց գնդէն մարդ չի կարէնայ ետ դառնալ Արճէշ: Եւ ինք լեռներու կարճ եւ անգնալի ճամփաներէ առաջ անցնելով դարձաւ՝ հասաւ եւ մտաւ Մեծոփ եկաւորաց ընդունելութիւնը պատրաստելու:

Խոսքով եւ Յովնան միախորհուրդ որոշած էին, թէ ինչպէ՛ս պիտի ընդունին իշխանները. հայ արիւն չի թափել իրենց գլխաւոր պայմանն էր. ուստի կասկած չի տալու համար՝ Խոսքով գրեթէ անզէն եւ երկու ծառայիւք զիրենք դիմաւորեց վանքի դռան առաջ փոխանակ Մուշեղայ, որ տկարութեան պատճառաւ քանի մը ժամ կրնար ուշանալ: Խոսքովու կերպարանքը մեր երկու իշխանաց թեպէտ կասկածելի, որովհետեւ գիտէին թէ ինչպէս Յռիփսիմէ մեծ տիկնոջ հաւատարիմն էր, բայց տեսնելով զինքն անզէն երկու իրեն պէս անզէն ծառայիւք, մտան ներս եւ իրենց պատրաստուած վանքի ամենէն փառաւոր սենեակը նստան: Յուրտ եղանակին՝ ուղեւորութեան յոգնութեան փոխարէն լաւ տաքուկ սենեակը, իրենը համեղ ճաշիկը, ուր զանազան ընտիր ըմպելիք առատօրէն շարուած էին եւ ախորժ կը բերէին, Խոսքովու օրինակը՝ իրեն ուրախ զուարթութիւնը, իւր կեղծաւորութենէ հեռու լայն ճակատը, իւր բարձրաձայն ծիծաղը, եւ Մուշեղի միջնորդութեամբ Բուղայէ ընդունած ներողութեան կեղծ հրովարտակը, որ արաբացի լեզուաւ գրուած ծոցէն զգուշութեամբ եւ երկիւղածութեամբ կը հաներ եւ զօր ոչ ոք կարդալ կարող չէր, բոլորովին ապահովեցին մեր երկու Վահրամները, եւ ամէն երկբայութիւն մէկդի թողած սկսան ուտել եւ խմել ամենայն վստահութեամբ սպասելով Վահեւունուոյն:

Երբ գինին ամէն կասկած փարատեց, գլուխները տաքցան եւ աչքերը զուարթութեան փայլ առին, Վահեւունին մոռցուի ցաւ եւ Ալեքացին հին բարեկամ դարձաւ: Վահրամ գինակիր ըսաւ Խոսքովու.

— Վերջապէս դու էլ մեզի հետ յուսահատեցար եւ այս վիճակն ընդունեցար. խելօք մարդը իւր գործն առաջ կարգի դնելու է, ես